



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԵՒԱ ԸԱԲԱԹ 29 ՄԱՅԻՍ 1865

ԹԻՒ 754

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԵՒԱ 29 ՄԱՅԻՍ

Ամսոյ 15ին ըստ նոր տոմարի, Քորսիքա կըզդւոյն Ամասիո մայրաքաղաքին մէջ հոյակապ յիշատակարան մի կանդնուեցաւ ՚ի պատիւ Նաբոլէոն Առաջնոյն և իւր չորս եղբայրը : Այս հանգիստին կընախագահէր Նաբոլէոն իշխանը, այժման դադղիացոյ կայսեր հօրեղծորդին, որ երկար ատեն նախօրոշեամբ մի քաղաքական զանազան խորհրդածութիւններ ըրաւ, ու բացարձակ ազատութիւնը և սահմանափակ կառավարութիւնը դրվելով, յաւելցուց և ըսաւ, թէ անկիւ միայն կը յարմարի իմ հայրենակցացս ոգւոյն և այլն :

Թէպէտեւ Նաբոլէոն իշխանին ազատասիրական ոգին յայտնի է ամենուին, բայց մինչև ցայսօր Աւրոսիոյ քաղաքական ընդհանուր կարգաւորութեանը դէմ այս աստիճան չափազանց ազատութեամբ խօսեր չէր : Ուստի Նաբոլէոն Արքայի ինքնազիր նամակ մի հրատարակել տալով Փարիզի Մոնիթօր պաշտօնական օրադրոյն մէջ, փութացաւ դատաւար տեւ զյիշեալ տոննախօսութիւնը, յառաջ բերելով թէ Նաբոլէոն իշխանին քաղաքական վարդապետութիւնը կընայ կայսերական կառավարութիւն թշնամացը ծառայել, Վերջապէս զաղղիացոյ կայսրը յիշեալ իւր նամակին մէջ այսպէս կը յաւելու, «Նաբոլէոն Առաջին թէ իւր ընտանեացը մէջ և թէ իւր կառավարութեանը մէջ խիստ բարեկարգութիւն մի հաստատած էր. ուստի ես ալ մի և նոյն ընթացքին պիտի հետեւիմ» :

Այս ամեն եղելութեանց պատճառաւ, բարձրապատիւ Նաբոլէոն իշխանը հրաժարեցաւ կայսերական մասնաւոր խորհրդոյն նախագահական փոխանորդի պաշտօնէն և անկեղծական արուեստահանգիստին յանձնաժողովոյն նախագահութեան պաշտօնէն :

Յայտնի է որ Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը

թիւնը արեւելեան խնդրոյն վրայօր անդադար խելք յողնեցնելով խիստ օգտակար և իմաստուն խրատներ կուտայ միշտ օսմանեան կառավարութեանը և անոր ուշադրութիւնը և խնամքը կը հրաւիրէ թուրքաստանի բնակչաց ներկայ և ապագայ բարեկեցութեանը վերայ տմեն պարագայից մէջ, զգուշացնելով զՆաբոլէոնի ՚ի ուր աչի ամեն զործանութիւններէն, ուսկից անպիմային մէջ կընայ վտանգ մի ծագիլ իւր անկախութեանը համար :

Հուզիկ պարանոցին բացուելու, այսինքն ջրանցք մի շինուելուն մեծ դործը՝ զոհութիւն Աստուծոյ, այս վտանգէն ազատեցաւ : Նաբոլէոնի ՚ի ուր իւր հաւատարիմ գաշնակցին Մեծին Բրիտանիոյ կառավարութեան բարեկամական թեւաբուրութեանցը հետեւելով, հարկաւոր տնօրէնութիւնները ՚ի դործ դրաւ և զգուշ պիտի կենայ միշտ որպէսզի յիշեալ առեւտրական դործանութիւնը՝ քաղաքական նպատակի մը չծառայէ ապագային մէջ : Բանդի այս քաղաքական նպատակը՝ ոչ միայն ձախող հետեւութիւններ կընայ ունենալ Նաբոլէոնի ՚ի անվերահսկելի և իշխանական և իշխանական փոխարքայական անկախութեանը համար, այլև քաղաքական կընայ ըլլալ Մեծին Բրիտանիոյ՝ Հնդկաստանի հետ ունեցած առեւտրական յարաբերութեանցը և ուրիշ բազմաթիւ օգուտը :

Անդրոյ կառավարութեան և Նաբոլէոնի ՚ի անվերահսկելի և իշխանական և իշխանական փոխարքայական անկախութեանը համար, այլև քաղաքական կընայ ըլլալ Մեծին Բրիտանիոյ՝ Հնդկաստանի հետ ունեցած առեւտրական յարաբերութեանցը և ուրիշ բազմաթիւ օգուտը :

Հայտնի է որ Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱՊԻԱ

Ընդհանրական ազգային ժողովոյն Հայոց՝ գումարեկոյ ՚ի 12 Փետրվարի 1865 ամի, ՚ի կալկաթա :

(Տէս Կրօնոյ 752—753 թիւերը) :

Բ. Իբրեւ նախընթաց առարկային ելել այս օրինակ վախճան, մեր զգուշաւոր հետազոտութեամբ եկար ՚ի ծանօթութիւն ըստ կարեաց հարաւորութեան յաղթելու արժանաւորութիւն, թէ ժողովակ մի՞ կազմեալ ՚ի կուտակցոյ Յովհաննէս Խաչիկեան քահանային, առաջարկեալ է վեհապետութեան Ձեռն զվճարակալութեան խնդիր Հնդկաստան չորթիլ ՚ի նախկին զրից հարազատ վիճակաւորութեան խրոյ, և արկանել ընդ անմիջական կառավարութեամբ սրբոյ ակնույն Լեւոնիստի սյուրբին հանգերձ, ընկեացն նշմարելով ՚ի հրապոյրս որպէս թէ առանձին օգուտ սրբոյ ակնույն եւ ամենայն ջանք նոցա և ճիշդ՝ համազեալ թիւրեւս սովին սեղանակապետ դաւադրութեամբ՝ ընդդէմ ամենայն քաղաքական բարեմասնութեանց և արդարադատութեանց, զՁեռին Վեհապետութիւնն ՚ի կատարումն սպորէն խնդրոյն բերել : Արդ՝ այսպիսի պատ՚ի պատ դուք և որոգայթք սին լիառամբութեան և վրէժառութեան, թէ յորպիսի աղբերաց և ՚ի խղճէ բղին և յինչ վախճան դառն հետեւանց եղբրին թողանի Նորին սրբազնակաւոր Վեհապետութեան կըտաղատել և հետեւան ՚ի վերայ, թէ ՚ի դէպ զայս աստանօր ապա յարել ընդ այսմ զայն իմաստուն առած թէ՛ ամենայն սր յորոյ կրէ, ՚ի նոյն և

Հայտնի է որ Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը

Գ. Վաւերական դատի գրութիւնն թէ ուրիշ երբէք ուղղեցի աւ Նորին սրբազնակաւոր Վեհապետութիւնն յանուն հատարակութեան բնակչաց կալկաթայ յորձամ լիցի ստորագրութեամբ եկեղեցական և անդամոյ հողարարծու պաշտօնատարաց, և կըրով եկեղեցոյն վաւերացուցաւ :

Գ. Մաղթի ՚ի Նորին սրբազնակաւոր Վեհապետութիւնն առաքել սրբան և հարաւոր է կանխու առ նախալիշատակեալ ժամանակեան հողարարծու զուտ ձէնս խնդրադրոյն, ուղղեալ ՚ի ժողովակն յանունն՝ համազգի առանձնաւորաց վաւերացեալ ըստ քաղաքական օրինի, այն որ հայն ՚ի վիճակալիստութիւնն Հնդկաստան բնակչաց կալկաթայ և չըջագայից նօրս սյուրբին հանգերձ :

Ե. Ստոտ չափաւոր համակալ խրատական և յորդորական բանիւք ՚ի Նորին Վեհապետութիւնն առ յիշեալ քահանայն թուի զօրաւոր և արդիւնական ներդրածութիւնն առնել խաղաղութեան. ապա թէ ոչ երկրից մեծ երեկ խոտովութեանն օր աւուր զայրաւալ յորձամ կալնուլ զառաջս դժուար լինի չաւանթ թէ անհնար :

Գերապատիւ տեառն Մովսիս արքեպիսկոպոսի և վարդապետի առաջնորդի սրբոյ Սմեալիւրիչեան վանաց Զուգայոյ և վիճակաց նօրս,

Որդիական ջերմութեամբ համարյոք սրբոյ աջոյն օժութեան :

Համբաւ հասի ձեռոյ բարձր սրբազնութեան ՚ի Գաւրձ հնչեալ յալանջս մեր, անկեղծաւ առնէ յորէ ցօր ժամանել ձեր ողջամբ ՚ի նպատակ ձեր, ՚ի վանս Զուգայոյ առաջնորդական իշխանութեամբ :

Թաղուհոյն երեսփոխանը և զանազան հարցումներ ըրաւ իւր ճանապարհորդութեանը վերայ : Հետեւեալ օրը՝ այսինքն Մայիսի 16ին, կէսօրէն ետեւ, բարձրապատիւ Մեծ-Իսպարդոս իմաստաւոր և արտաքին գործոց տեսուչ Բարձրապատիւ Ալի փաշան, որոց քաղաքական տաղանդոյն և խոհեմութեանը վրայ թուրքաստանը իրաւամբ կընայ պարծիլ, Անդրոյ պալատը դացին ՚ի Բերա՝ վսեմափայլ սրը Հենրի Պիլլըվերին ողջամբ վերադարձը շնորհաւորելու համար : Մեծին Բրիտանիոյ երեսփոխանը մեծ յարգանք ընդունեցաւ զյիշեալ առաջին նախարարները, և երեկոյն ճաշի հրաւիրեց զանոնք : Հետեւեալ նոցին բարձրութիւնները հազիւ թէ կարող եղան կէս զիշերին երկու ժամ մնացած մեկնիլ Անդրոյ պալատէն :

Հարաւային զինուորական զօրութիւնը անհետ ըլլալով, պատերազմը թէպէտեւ դադարեցաւ, Ամբիկայի Միացեալ Նահանգաց մէջ, բայց դժբաղդաւ բար հաշտութիւն չեղաւ, և խաղաղութիւնը չվերահաստատուեցաւ : Հարաւային ժողովրդոց ատելութիւնը մեծ է Հիւսիսայնոց վերայ, որոնք իրենց թշնամաց ընդարձակ երկիրներուն չեն կընար զինուորական կերպիւ տիրել, վասնորոյ գիւրին է Հարաւայնոց բարոյապէս դէմ դնել միշտ. մանաւանդ որ կարօտութիւն մի չունին Հիւսիսայնիներէն : Հաշտութեան վերահաստատուելուն մէկ դժուարութիւնն ալ Ղոնսօն նախագահին խիստ բնաւորութեանն կըրձաղի. որ կուզէ սաստիկ կերպիւ պատժել Հարաւային գաշնակցութեան զխաւորները. զորս կամակից և մասնակից կը համարի Վիւզօն նախագահին սպանմանը :

Մայիսի 5—17 ամսաթուով Նիւ-Եորքէն հասած լուրերը կը ծանուցանեն թէ Հարաւայնոց Տէվիս նախագահը՝ հանգերձ իւր ընտանեօքը բոնուրէ է ուղահապան զօրօք ճամբայ դուրսէր է Վաշինկթըն երթալու համար :

Հաւատաւոր ապաքէն թէ հասեալէ ցարդ համբաւ ուղեւոր խոտովութեան և երկաթուղիութեան յալանջս Ձերին սրբազնութեան ՚ի քանի ամաց հետէ յուզեալ ՚ի միջ երանեալ թաղիցս սրբազան առաջնորդին հանգուցելոյ և Յովհաննէս Խաչիկեան վիճակալաք քահանային հանգերձ հետեւանօք վշտայի պատահարացն որ ցարդ ևս երկի տեւել չարունակաբար ՚ի վշտակութիւն համազգեաց թէ աստ և թէ սղըր և թերեւս ոչ ստիւաւ ուղղմամբ և ՚ի սիրտ Ձերին սրբազնութեան : Եւ զի Սրբազնութիւն ձեր, որպէս դատի, ունի պէտտեղեկութեան այսր վշտայի անցից յարժանահատաւորեցաւ, ապաքէն կըրդի ընդ այս վիճակալեալ պատձէն կանգակի Նորին բարձրագոյն Վեհապետութեան Սրբաւան Սթոու պաշտօնակցին հասարակութիւն կալկաթայ, ևս և վճիռ ժողովոյ ՚ի համազգեաց խմբել ըստ խնդիր հանգերձ պատձէն չըջարեւակալանի և պատասխանել մեր աւ Նորին բարձր Վեհապետութիւն յորոց տեղեկութիւն կալեալ վորք ՚ի շատէ անկունիմք խոհական դատողութեամբ Սրբազնութիւն ձեր ունի զարժան խորհիլ և ըստ այնմ տնօրինել ըստ պիտեկոյ խնդրոյն, և մեզ համաուսուլ ուղղաւ առնել յիւրում ժամանակի :

Եւ մեր միտքն ամենայն որդիական անհաճութեամբ ձերոյ բարձր սրբազնութեան ամենախոնարհ ծառայք :

(Զեռ.) Գերդ Վեհապետ, և եկեղեցական Ս. Լուսնատուն Գ. Գ. Գաւրտունեան Նազարէթայ սուրբ Խ. Յ. Ղուկասեան եկեղեցոյն Հայոց, Գ. Մ. Յ. Բէզլարեան ՚ի կալկաթայ ՚ի 10 Թովմաս Միլլերուսեան Յունիսի 1864 : Կուսկարիք :

ԱՐՇԱՆՈՅՍ

Հաւատարիմ աղբիւրներէ առ մեզ հասած տեղեկութեանցը նայելով, Կոստանդնուպոլսոյ աղղային պատրիարքարանին և Ս. Փրկչի հիւանդանոցին դրամական կացութիւնը ցաւալի ու ամենաձախորդէ Գրադրաց, դործակալաց և սպասաւորաց վարձքը 7-8 ամիսէ 'ի վեր ածվածը կը մնայ և այս սլարտուի վերայ եթէ ուրիշ հին և նոր սլարտքը յաւելցուի, յայնժամ կրնայ մէկը երեակայել թէ այս կացութիւնը երկար ժամանակ չկրնար 'տեւել, և շուտով հարկ պիտի ըլլայ, կամ Պատրիարքարանը զոյցել կամ անոր զրադրաց և զործակալաց թիւը պակսեցնել:

Յայտնի է որ աղղային վարչութիւնը հինգ զուլուշնոց քսան հազար տոմսակ տպել տուած էր, որ ժողովրդեան մէջ բաժնուելով՝ անոնց արժէքը 100 հազար զուլուշ 36 քր. բերուի 'ի նպատակ խուց Ս. Փրկչի հիւանդանոցին: Իսկ այս փորձը զժաղաքար չէ յաջողեւր քանակ կը լսեմք որ հազիւ թէ 2000 տոմսակ քուլեր է. այսինքն միայն 10 հազար զուլուշ կարելի եղեր է ժողովել:

Կոստանդնուպոլսոյ աղղային Կրօնական և Վաղարշական ժողովները նորոգելու համար քանի մը անգամ մեծարդոյ երեսփոխանները 'ի ժողով հրաւիրուելով, անկարելի եղաւ 71 երեսփոխան միեւնոյ բերել, որպէսզի ըստ սահմանադրութեան օրինաւոր նիստ մի ըլլայ: Ուստի զժաղաքար հարկ եղաւ ապօրինաւոր նիստով և յուղարկուած ու անձամբ բերուած 66 քուլէի քիչեւ քաղաքական և կրօնական ժողովները կազմել:

Այս 66 քուլէից վերայ բացարձակ առաւելութիւն ընտրուողները հետեւեալներն են.

Անդամը կրօնական ժողովոյն,	քուլէ
1 խորհրդ վարչապետ Գալֆեան	61
2 Արքեպիսկոպոս Իսկիւտարու	60
3 Գարեգին վարչապետ Թաթարեան	41
4 Սարգիս արքեպիսկոպոս	40
5 Տէր Իգնատիոս քահանայ Սիւրբ Եղի	38
6 Տէր Գրիգոր Աճէմեան	37
7 Տէր Սեբեակ մայր եկեղեցւոյ	36
8 Յովհ. վարչապետ Ղալաթիոյ	35
9 Տէր Լաւրենտի Սասազիւղի	33
Երկրորդ քուլէակութեամբ ընտրուողներն են.	
10 Տ. Յովհաննէս քահանայ մայր եկեղեցւոյ	47
11 Յովհաննէս վարչապետ Զուպուքճեան	39
12 Տէր Սիւրբ քահանայ Սասազիւղի	39
13 Տէր Գրիգոր " Սամաթիոյ	36
14 Տէր Գրիգոր " Պէշկեմաշի	31

Գերատաւոր. արքեպիսկոպոս Գալֆեան,
Գ. Գ. Գալֆեան
Խ. Յ. Ղալաթեան
Գ. Սեբեակ Բիզարեան
Թովմաս Սեբեակեան
Կոմիտարի:

Մեծապատիւ սրբաւոր

Ըստ կանոնական իրաւանց և ըստ արդար վճարողութեան վեհապետ Հայրապետին, վիճակն Հնդկաստանի որպէս իսկզբանէ հետէ նոյնպէս և այժմ և առայսպէս կայ և ունի մնալ ընդ իշխանութեամբ Ամենափրկչեան սուրբ վանանց Զուլուշ, ըստ հոգեւոր իրաւասութեանց մասին և որք զհակառակն այնր խորհրդէ կամ առնել կամիցին, չունին ազատ մնալ 'ի պատասխանատուութեան առաջի Աստուծոյ:

Ըստ եկեղեցական կանոնաց և ըստ վաղնջոյ սովորութեան, աւագ քահանայն Նազարէթաց սուրբ և եկեղեցւոյ տեղւոյ, այն՝ որ կարգեալ իցի և հաստատուալ կողմակաւ առաջնորդի սրբոյ Ամենափրկչեան վանաց, ունի միայն իրաւունք նախագահութեան 'ի մէջ եկեղեցւոյ՝ ըստ աւագերկցական պատուոյն սեպհականեալ արտօնութեանց, և նա միայն կարող է կարգադրել և տնօրինել զհոգեւոր գործն ժողովրդականայն համախորհրդեամբ իւրոյ միաբան պաշտօնակցացն: Համաձայն այնր կարգի և գերատաւորութիւնը ձեր' որպէս բարեկամ պաշտօնատար սրբոյ եկեղեցւոյ 'ի զէսս հարկաւոր խնդրոյ և առարկայից' կարող էք զորոշան տընտրել:

Անդամը Վաղարշական ժողովոյն բացարձակ առաւելութեամբ ընտրեալ:

Անդամը,	քուլէ
1 Փափազեան Սիւրբեան	52
2 Աղաբէկեան Սարգիս	45
3 Տոքթոր Սեբեակ	43
4 Նեվրուզեան Յովակիմ	39
5 Զարգարեան Գեորգ	36
6 Գաղաթեան Յակոբ	34
Երկրորդ քուլէակութեամբ ընտրուողներն են.	
Մեծարդոյ տեւրք,	
7 Տոքթոր Ռաֆայէլ	49
8 Սաղսուտեան Սիմոն	46
9 Թորոս-Պէյ Գիւսակ	45
10 Յովհաննէս-Պէյ Աւանեսեան	40
11 Սիւրբեան Յակոբ	36
12 Ալթուն Տիւրքի Էֆէնտի	35
13 Պալաթեան Յովհաննէս	33
14 Գալաթեան Յարութիւն	33
15 Կորիկեան Նշան	32
16 Սարաֆեան Յարութիւն	32
17 Թաղաթեան Յովհաննէս	32
18 Տատեան Սիմոն-Պէյ	30
19 Մանուկեան Սիմեոն	30
20 Պարտիզպանեան Աւետիս	30

Յաւալի սրտիւ կը ծանուցանեմք թէ, ինչպէս Հայաբնակ ամեն տեղ, նմանապէս 'ի սուրբ Եւփածին, տարածայնութիւնը և երկպառակութիւնը կը թաղաւորէ 'ի մեծ փառ ընդհանուր ազգին: Այս տարածայնութեանց ձախորդ հետեւութիւնը սրտառու տուաւ պայծառափայլ Վաղարշեան խաչատուր կոմսին, որ ամէն պարագայից մէջ երեւել հանդիսացած է իւր ազգասիրական գործքերով, փութալ հետեւեալ նամակը գրելու առ վեհափայլ սրբազնասուրբ տէր Մատթէոս Կաթողիկոսն:

Ձերոյն վեհափառութիւն' ողորմած Հովնապետ, Ս. Երեմի իմ հաւատարմութիւն առ եկեղեցին եւ առ ազգն մեզ' ոչ երբեք կարեկից լինէի եւ իբրեւ որդի հարազատ' առ իմ ծնող եկեղեցի, այլ միշտ արհամարհանօր ստանալիք մնայի ըստ օրինակի բազմաց մերազնեայց. որք ոչ ցուցանեն իմիք գործակցութիւն կամ գծեւտնութիւն, այլ միայն տրտնջեն զանգատին, զրպարտեն, զրախօսեն, վաճա, կոխա եւ խռովութիւնս յարուցանեն յամենայն տեղիս, յորս ազգի ազգի պատանին դէպք:

Բ. Վաղարշայտ է եւ ապացուցեալ զի Հայաստան բազում անգամ եւ միշտ յոյժագոյն կրեալ է տառապանքս յանկրթութենէ, յանոստանութենէ, յանմիաբանութենէ, 'ի չարամտութենէ, 'ի չար նախանձութենէ եւ 'ի պէս պէս յամօրայի վրդովութեանց, եւ 'ի վնասարեւր դաւադրութեանց:

Հանդերձ մեծարանօր մնամք, ձերոյ դերապատուութեանց Սեբեակար ծառայ,

Ի Զուլուշ, յԱմենա. (Ձեռ.) Պարսկաստանաց սուրբ վանք, 'ի 24 և Հնդկաստանի Հայոց Հոկտեմբերի 1864, արքեպիսկոպոս Մովսէս:

Արժանապատիւ սրբաւոր տէր Գալստիան Նազարէթեան աւագ քահանայ Նազարէթաց սուրբ եկեղեցւոյն:

Օրինակ հատուածի թղթոյ միջ Դորին բարձր Սրբազնութեան տեւան Մովսէս արքեպիսկոպոսի և Առաջնորդին մերոյ կցարդի ընդ այս 'ի գիտութիւն, և մաղթի յարգութեամբ ըստ առանձին որոշման 'ի գործ դնել անյապաղ զհրաման նորա 'ի շուք երեսայ Ամենափրկչեան վանաց և գերաւեծար քահանայի նորա. ապա թէ զանց տուլի կատարել զհրամանն որոշ, մաղթի ազգ առնել մեզ գրով յորժամ ունիմք մեր զհրաւորն հոգալ և պատասխանատու գր յարգութիւնն ունիլ վանք ամենայն զիսկայ օրք անախորժ եւ իւր ունիցին հետեւան:

Եւ մնամք ամենայն յարգութեամբ ամենախորհրդաւոր ծառայք ձեր,

(Ձեռ.) Գեորգ Աւետեան եկեղեցւոյն
Գ. Գ. Գալստիան
Խ. Յ. Ղալաթեան
'ի Կոմիտա
24 Գիտեմբեր
1864: Գ. Մ. Յ. Բեղարով
Կոմիտարի:

Արժանապատիւ սրբաւոր տէր Գալստիան Նազարէթեան

Գ. Ս. Սրբի. անգա Եւփածին եւ գերագոյն կառավարութիւն Հայաստանաց եկեղեցւոյ, եւ ծայրագոյն Պատրիարք եւ այլ բնակալ արքեպիսկոպոսք եւ ամենայն հոգեւորականք երբեք անգազգի ազգի բռնառութեանց քէ յառաջին ժամանակա եւ քէ յայժմոս: Վերջին չարաբաստ խռովայոյց աղմուկքն ծագեցան յառաջ քաղաքորութեան կայսերացն Պառլոսի առաջնոյ եւ Սեբեակեան խռովայոյց յորս անակնկալ փոփոխութիւնք եղին արտօնելից լինելով Դարի անուամբ եւ եր Կարուիկոսին եւ հաստատութեամբ Գալֆեի 'ի կարուիկոսութիւն, եւ Եփրեմի եւ Գրիգորի 'ի վիճակաւոր արքեպիսկոպոսութիւն Հայոց 'ի Ռուսիա:

Գ. Ի հետեւան առաջարկութեան Ֆիւմարչալ կոմսի Պապիէիչի վարչաւեան իշխանին ըստ բարձր հրովարտակի կայսեր Նիկողայոսի առաջնոյ, պատրիարքն Եփրեմ ընկալեալ 'ի պարգեւ գառաջին արքայական յրանգան Ռուսաց, այն է գարբոյն Անդրիկ մախակոյց Առաքելոյ, արձակեցաւ 'ի պաշտօնէ իւրմէ 'ի պատճառս ծերութեան եւ 'ի տեղի նորա կարգեցաւ Պատրիարք Յովհաննէս Կարբեցի, քէ եւ Հայք յայնժամ քախանանօր խնդրին հաստատել 'ի նմին պաշտաման գերիցագոյն արքեպիսկոպոսն Ներսէս, որ յայնմ իսկ ժամանակի հետաքոյցեալ եր 'ի Պեսարապիայ, ըստ բարձրագոյն հրամանի, համաձայն առաջարկութեան նոյն իսկ զխառն հրամանատարին գորաց կոմսին Պապիէիչի:

Ե. Երեւեղեն յայնժամ բազում փոփոխութիւնք, կարեն ուրեմն եւ այժմ յառաջ գալ փորով հոյնայիս յեղովիտութիւնք ըստ առաջարկութեանց Անդր կովկասեան փոխարքայի մեծ իշխանին եւ ըստ բարձրագոյն հրովարտակց արդարադատ կայսեր, յատկապէս վանք կարմելոյ զբազմապատիկ զանցառութիւնն եւ զանկարգութիւնն, եւ առաւել եւս վանքն ճշդիւ եւ անբերի կատարելոյ գնաւարակեայն տպագրութեամբ գործնագրութիւնս եւ գործարտակս եւս եւ զբարձրագոյն կայսերանաստատ կարգադրութիւնն յաղագս եկեղեցեաց Հայոց 'ի Ռուսիա, որպէս յընդհանուր կառավարութեան նոյնպէս եւ 'ի տնտեսական կարգադրութիւնս քէ Եւփածին եւ քէ վիճակաց առաւարակ:

Զ. (Այս յօդուածոյն մեջ գրուածները օսմանեան կառավարութեան դէմ եւ միանգամայն սխալ տեղեկութիւններ ըլլալով, արժան ջնամարեցիմք հրատաւրակելու:)

Է. Վասնորոյ յամենայն ուրեք յամենայն բազաւորութիւնս, որպէս եւ յԱսիայ նոյնպէս եւ յԵւրոպա մինչ զի եւ 'ի լուսաւորեալ տեղութիւնս գոն բարձրագոյն իշխանութիւնս եւ օրենք, որոց հնազանդիլ

թեան, վիճակաւոր աւագերէց Նազարէթաց սուրբ եկեղեցւոյն Հայոց Կաթողիկոս:

Յետ ամաց ինչ անհամաձայնութեան և ցուալի երկպառակութեան ազգայնոյ մերոյ որ աստ 'ի հաստատու վերադին 'ի պատուի իւրում և 'ի պաշտաման սրբաւոր տեւան Յովհաննէս Սաղաթեան խաչակիր աւագ քահանայի բարձր հրամանագրութեամբ վեհապառկա թողիկոսին ամենայն Հայոց, չղկեմք վերջ չարժանութ ստիպեալ զձեզ տեղութիւնը գլխեալ արժանապատիւ աւագերէցն յեկեղեցւոյ և արկանել զիսկայն նորա 'ի դան աշակերտաց:

Այս հարցար 'ի ձէնջ զայնման տուրք ինչ յառաջ բերանայ 'ի ժողովին գործակալաց, սակայն պատուական ձեր էր յոյժ անբաւարարական. ուստի պարտաւորեալ այժմ գրաւոր բռնել հարցանել 'ի ձէնջ նոյն թէ որով հրամանաւ օրինք և կամ ստիպմամբ արարիլ զուր գլխեալ փոփոխութիւնն յեկեղեցւոյ և զինչ նպատակ ձեր յայն արար. և երկրորդ խնդրել 'ի ձէնջ զի ձերոք արարեալ առաքելցէր առ մեզ վաղվազակի զիսկական գրութիւն սրբազն Սեբեակեան Զուլուշ սրբոյ զյօդուածս ինչ և եթ օրինակեալ ցուցիլ մեզ վաղեմայնոյն յայնու զարարս ձեր. նաեւ զօրինակ նախկին, որոյ 'ի պատասխանի գրեալէ սրբազն Սեբեակեան զգլխեալ հրամանագրին իւր. որոյ վանքն ինչոյ կմք զձէնջ գործնակ յոյժ:

Սրբութեան ձերում խորհրդ ծառայ, (Ձեռ.) Զ. Մ. Մանուկեան, յ31 Յունիս 1865 'ի Կաթողիկոս և այլն:

պարտին ամենեքին եւ խարանձիւրք : Այժմ եւս 'ի Գաղղիա 'ի բաց վտարեն գնովմեական կաթոնիկաց Կարդինալս եւ զարքեպիսկոպոստնս , հանելով զնոսա հրովարտակօր կայսեր 'նաբոյեանի երրորդի' 'ի բարձր կոչմանց , 'ի պաշտամանց եւ 'ի վիճակաց :

Ը . Հաւաստի ե գի 'ի Հայաստան եւ 'ի Վրաստան վերին կառավարութիւն տեղւոյն եւ Անդր Կաւկասեան Փոխարքան մեծ իշխանն , եւ աստանօր 'ի Ս . Պետրպոլսիկ նախարարութիւնն ներքին գործոց եւ Կաւկասեան ժողովն յոյժ եւ յոյժ անգոյն են քէ զձաշկազոյն Պատրիարքի եւ քէ զՍինոդին Լշմիածնի : Նաեւ ամենայն վեճք , զանգատք , անկարգութիւնք հասեալ են արդեն 'ի տեղեկութիւն քաղաքի կայսեր : Վերազնոյթիւնք նոցին եւ քննութիւնք սկսեալ են , շարունակին , եւ մարք ե քէ վճիռքն ոչ բարոք վախճում առնուցում , որպէս վասն ամենայն եղծմանց , նույնպէս եւ վասն յայտնի ընդդիմակացութեանց , եւս եւ վասն հակառակութեան օրինաց ընդդիմ բարձրագոյն հրովարտական եւ ընդդիմ կայսերական կարգադրութեանց , որ յաղազ կառավարութեան եկեղեցեաց Հայոց 'ի Ռուսիա :

Թ . Ծայրագոյն Պատրիարքն Լշմիածնի ըստ կրօնական մասին ե արդարեւ ընդհանրական կարողիկոս ամենայն Հայոց բնակեցոյ յայլեայլ տեղութիւնս եւ 'ի կողմանս . բայց եւ հայելով յայն' զի Լշմիածնին եւ ինքն Պատրիարքն եւ Սինոդն եւ ամենայն եկեղեցիք Հայոց եւ հայր գտանին 'ի սահմանս Ռուսիոյ եւ 'ի կախման 'ի վերին կառավարութեանն Ռուսաց , առաւել եւս հարկ ե կայ 'ի հնազանդութեան առ բարձրագոյն կամ քաղաքի կայսեր , եւ ջանալ զի օրենք , հրովարտակք , բարձրագոյն կարգադրութիւնք եւ հրամանք անյապաղ կարգադրեսցին ճշդիս , անքերի եւ անփոփոխ առանց իրիք զանցառութեան :

Ժ . Հռովմեական կարդիսկական եկեղեցւոյ կարդիսկալք , արքեպիսկոպոստնք , Մետրապօլիտք , նույնպէս եւ Լուստրականաց եւ Ռեֆորմատաց գլխաւոր Սուֆեր , Ինքեփիդք եւայլք ամենեքին ստորագրեալք են հրովարտական , բարձրագոյն կարգադրութեանց եւս եւ նախարարաց 'ի Ռուսիա , ամենեքին կատարեն զհրամանս եւ զհրովարտակս :

ԺԱ . 'ի Ս . Պետրբուրգ ստացեալք եղեն յարք եւ զանգատք քէ եպիսկոպոսն Անդրեաս 'ի Նախիչեւան շնկանոնաբար առնէ զքննութիւն , հակառակ հրովարտական եւ օրինաց , եւ քէ Լշմիածնէ այլ որ առաքի 'ի Նախիչեւան : Վերին կառավարութիւնն եւ նախարարութիւնն համարին զայդ տարադիպ եւ անվայելուչ :

ԺԲ . յՍտորախանն հասարակութիւնն Հայոց բո-

ղոք բառնայ եւ խնդրէ 'ի նախարարութեան խափանել եւ մերժել զառաջադրութիւնն . քանզի վիճակաւոր արքեպիսկոպոսն Մատրեոս ամենայն Հայոց Ստորախանայ ('ի բաց առեալ զանբարեփոխ եւ վնասակար անձինս) եղիտ զյարգ եւ զգեր : Թախանձանօք հայցեն գնա (այսինքն զՄատրեոս արքեպիսկոպոսն) բողոք 'ի պաշտաման յորում կայ , որպէս հրամայեալն եւ կայսերական հրովարտական . իսկ գնոր արքեպիսկոպոսն Վեհապետեան ջառաքել եւ զկարգել : Վասնորոյ որպէս տեղական գլխաւոր իշխանութիւնն 'ի Վրաստան եւ Անդր Կովկասեան փոխարքայն մեծ իշխանն , նույնպէս 'ի Ս . Պետրպոլսիկ նախարարութիւնն եւ Կաւկասեան ժողովն յանջափըս դժգոհ են վասն ամենայն զանցառութեանց եւ անկարգութեանց ընդդիմ հրովարտական եւ ընդդիմ բարձրագոյն կարգադրութեանց եղեցոյ . վասնզի յայտնի են իրքն : Սկսեալք են քննութիւնք , զարուակին եւ վաղձանական միջոցքն ունին 'ի գործ դնիլ երբ ոչ կարճեցին յոյժ հակառակութեանց անհնազանդութեամբ օրինաց : Արդեւ քանի մի հրամանագրութիւնք առաքեցեալք են վասն օրինաւոր քննութեանց եւ պահանջմանց :

ԺԳ . 'ի վերայ երկրագնդիս չիք ինչ հաստատուն բաց 'ի մանուսն : Զիք ինչ կատարելութիւնք յաշխարհի աստ : Ամենայն մարդիկ գգածեալ են տկարութեամբք : Կանոնք եւ օրենք փոփոխին ըստ պահանջելոյ հանգամանաց եւ պիտոյից : Յորժամ չիք հնազանդութիւն եւ խնամարարութիւն , յորժամ չիք պահպանութիւն օրինաց եւ բարձրագոյն հրամանաց եւ հրովարտական , յայնժամ 'ի գործ դնին ստիպողութիւնք , պահանջողութիւնք , սահմանափակութիւնք , եւ հարկաւորի գոմն հրաժարեցուցանել 'ի պաշտօնէ , գոմն փոխադրել , եւայլն : Յորժամ 'ի Տաճկաստան , 'ի Պարսս եւ յայլ . . . պետութիւնս գոմ միշտ ազգի ազգի բռնութիւնք , հարստանութիւնք եւ չարիք , յայնժամ 'ի բարեկիրք եւ 'ի յուսաւորեալ տեղութիւնս 'ի վար արկանին արդարացի միջոցք 'ի մոծանել եւ 'ի հստատուն գառաւել օրինաւոր կառավարութիւն յամենայն գործս եւ 'ի տնօրէնութիւնս : Վաղվաղակի հրաժարեցուցանին անհնազանդքն , եւ 'ի տեղի նոցա անցանէն հնազանդ , եւ խոնարհամիտ անձինք սակա բարեկարգութեան : Այս միշտ եղեալ եւ ինչիցի : Նախ ինքնին ղիտեն եւ ապա զվախճանական վճիռն տան :

Ստանօր պարգաբանցի եւ ապացուցի եւ Զերում Վեհափառութեան զամենայն օրինաւոր եւ յարգելի պատմառա իրաւացի փաստիւք . որչափ վասն նախագործութեան , այնչափ եւ վասն զառաջս ունեցող զանբարի հետեւանաց 'յատկաբար վասն Զեր եւ ընդհանրապէս վասն եկեղեցւոյ մերոյ , յորում նուազին օրբստօրբ բարեկարգութիւնք . եւ այս յաւետ 'ի պատմառա հոգեւորականաց վերին կարգի , որք յայտնապէս ընդդիմանան բարձրագոյն օրինագրութեանց եւ հրովարտական սպագրութեամբ հրատարակելոյ , յաղազս բարոքելոյ վեկեղեցական կառավարութիւնս եւ զկրօնական բարոյական կրթութիւն ազգին Հայոց բնակելոյ 'ի Ռուսիա : Հասին նույնպէս յարք 'ի Ս . Պետրբուրգ եւ մինչեւ 'ի վերին կառավարութիւնն եւ 'ի նախարարութիւնն զայնոցիկ ղիտիք եւ աղմկաց եւ զգարաբար անցին , որ պատահեցան եւ դեռ եւս շարունակին Լշմիածնին :

Սպասելով 'ի մեծէ Հովնապետեղ տեղեկութեան մնամ կատարեալ յարգանք եւ հաւատարմութեամբ Զերոյին Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ Համար 27 ի 26 Յունի . 1865 ամի խաչատուր Լաղարեկ ի Սանկտպետրբուրգ :

Կընտրեմք մեծարդոյ խմբադիւր որ մեր յետադայ շնորհակալութեան յայտարարութեանը ձեր պատուական օրադրոյն մէջ անկիւն մը շնորհէրու հաճիք :

Իրաւունքը եւ արդարութիւնը երբ իւր հզօր պաշտպանին ազդեցութեամբը եւ գործադրելու համար նուէր ջանքով բարձր 'ի դուրս հանդիսացաւ , պարտաւորեցանք մեր երախտագիտական շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանել որոյ որ անկ է : Մեր ըստորում երախտագիտակալ եւ մեր իրաւանց զոր ծաղրութեան արդեւանց վայելող , չենք կրնար սպաշնորհ լըլը եւ մոլի պարտք եղածը չկատարել եւ 'ի լուր աշխարհի չյայտնել մեր անկեղծ սրտից զգայմունքը ,

որ զուտ երախտագիտական զգայմունք է :

Իշխման մինչեւ Հասարակ շինուելու վրայ եղող երկաթուղւոյն ընկերութիւնը երբ անհրաժեշտ հարկ ըզդաց դնոյ առնուլ նոյն երկաթուղւոյն պիտոյից համար Հայոց մէկ փոքրիկ թաղը՝ որ 43 տունէ բաղկացեալ է , 'ի զիրութիւնն այս մասին Երախտագիտական հրաժարական ստացաւ . եւ նահանգիս բարեխանամ ընդհանուր կառավարիչ վեհաժողովը Ռաշիտ փաշան փոխօրէն կայսերական նոյն հրամանը 'ի դործ դնելու զբաղել , միւսիսին իրեն կէտ նպատակել ընտրելով իրաւանց սկզբունքը , որով միայն կարելի պիտի ըլլար զվաղելիս համոզել իրենց ստացուածքը վաճառելու նոյն ընկերութեան : Միւր ստացուածոյ դոնէ ճիշդ քարտէք ձեռք անցնելու համար վեհաժողովը կուսակալն արդարաւրութեանն ապաւինած իւր հզօր պաշտպանութիւնը խնդրած էինք : Եւրոյն Վեհափառութեան ալ արդարութեամբ իւր բարձր ազդեցութիւնը 'ի գործ դրաւ եւ ամեն ջանք չխնայեց սոյն խնդրոյն լուծարելու համար : Հայուցիչ վախճան մը տալու մասին , որ անմիջապէս Հայ եւ Յոյն երեւելիներէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմեց : Յանձնաժողովը անդամք էին մեծարդոյ Մ. Երախտագիտական Սպարթաքեան , Խաչատուր աղա Ա. զաղարեան , Թաղուր աղա Սիւրբեան , Սեփարատ աղա Մ. Խիւտի , Մ. Բօլ Օմիրօ . որոնք զխօսէին արդէն խնդրոյն ինչ աստիճան ծանր ըլլալը , բայց եւ այնպէս իրենց նուիրական պարտաւորութիւնն մը քսեպելով վեհաժողովը կառավարչին որոշած նախապաշտ խիստ յարմար դատեցին , եւ գործադրեցին ամենայն փութով յոյսու տղաբաղի թաղեցւոյ . որուն արդիւնքը երեսուն երեք եւ եղած որոշումները ընդհանրապէս զվաղեցրեալ ուրախութեամբ եւ զոգնուածութեամբ լցուց : Վասնզի տեսանք որ այս կնճառտ խնդիրը բարեկալով վախճան մը ստացաւ , եւ մեր իրաւունքը ըստ ամենայնի յարգուեցաւ շնորհիւ օգոստոսիս Կայսեր եւ տեղւոյ բարձրապաշտ կուսակալին եւ Զանլիք եւ գործադրութեամբ յանձնաժողովոյն մեծարդոյ անդամոյն : Մեր որ այժմ մեր տանց իրաւամբ արժէքը յստանալու բաղքը ունեցանք , անշուշտ ապերախտ պիտի սեպուինք եթէ անտարբեր աչքը նկատենք զայս , ապերախտ պիտի սեպուինք եթէ այս շնորհաց արժէքը չճանչնանք . ապերախտ պիտի սեպուինք իրաւամբ եթէ չփութանք մեր ալ ընելու ինչ որ մեր անհրաժեշտ Երախտագիտական թիւնն է . ուստի համալում հաճութեամբ մեր ամենուն 'ի լուր աշխարհի կայսրոնեք մեր խորին շնորհակալութիւնը եւ խոնարհաբար կըմատուցանենք զայս մեր բարեխանամ վեհաժողովը կառավարչին , կըմատուցանենք նաեւ մեր անկեղծ շնորհակալութեան հաւատարմութիւնը յանձնաժողովոյն անդամ մեծարդոյ Տեառն : Եւ մենք մոլի եղած այս շնորհքը վայելելով յաւիտեան երախտագիտական համարելու պարտ անձին ճանչնալով կըբարեմաղթենք առ բարձրեալն Ստանաժ որ վերջիւ եւալ բարեբարաց երկար կեանք պարգեւէ :

Իշխման 41 Մայիս 1865 : Ի զինաց թաղեցւոյ Թաղուր Զ . Պեյրեքեան :

Իշխման Երախտագիտական ընկերութեան երրորդ տարեկան եկամույց եւ ծախուց տպեալ հաշուեցուցալը մեր աչաց առջև ունինք : Այս ցուցակին համաձայն 1864 Մայիսի 1էն մինչեւ 1865 Մայիսի վերջ , ընկերութեան տարեկան ամեն եկամուտը 27, 236 զուրուշ հասած է . իսկ ծախքը՝ 21,118 զուրուշ : Երախտագիտական ընկերութիւնը այսօրուան օրս 36,394 զուրուշ զբաւազրուի միւսն . որ տարուէ տարի աւելնալու վերայ է :

Յիշեալ ընկերութեան ձեռք տարուան մը մէջ խնամալ աղքատ հիւանդաց թիւը 363ի հասել է , որոցմէ 346 հոգին կատարելապէս առողջացել են , 8 հոգին կըբարձրանան եւ 9 հոգին մեռել են :

Երախտագիտական ընկերութիւնը կըկառավարուի 11 անդամներէ բաղկացեալ խորհրդէ մի , որոյ անուններն հետեւեալներն են .

- Մեծարդոյ տեալը ,
Ստեփան Զէլիք , ատենապետ
Ս . Միլզա Վ . անանդեցի , ատենապետ
Ստեփան Յովհ . Տէմեան , արքիւպատ
Լիւտոն Երախտագիտական
Գալուստ Վ . Էման
Գրիգոր Երախտագիտական
Յարութիւն Փափաղեան ,
Յովհաննէս Գուշատեան
Պողոս Պեյրեքեան
Պողոս Տիւրքեան
Սարգիս Թ . Զէլիք :

Յարգելաւորելու պարտն Զորար Մ . Մանուկեան ,
Եկեղեցւոյն Կալ . Ե . Զիւ . սուրբ եկեղեցեացն Հայոց :
Յարգելի պարտն ,
Ընկալայ ԵՃ Զոնալար Թուոյս զրուծին յարգութեանը , որով հարցանեք թէ՛ «որով հրամանաւ . . . տարբեր փոփոխութիւնն նախադասութեան յեկեղեցւոյ . եւ պահանջել յինչն զիսկական զրուծին սրբազան Ստաւրոգլին , եւս եւ զօրինակ նամակին՝ որոյ 'ի պատասխանի ասէր զընցաւ այն հրամանադիր» :
Ի սրտաստանի ծանուցանեմ՝ սովաւ , զի հրամանաւորով սրբազան Ստաւրոգլին եղեւ այն փոփոխութիւն՝ զոր զրեալ էր Եւրոյն Սրբաղոթութիւնն առ յարգոյ պարտեղիքը Աւետի նախկին եկեղեցւոյն տեղւոյ . որոյ եւ տնօրէնութիւնն առեալ էր 'ի ձեռս նորին , եւ մեր ըստ այնմ կատարեցար . ուստի եւ իսկական հրամանադիր այն՝ զորով առ նորին յարգութեանն խնդրեցի զայն 'ի նմանէ որպէս եւ զօրինակ նամակին իւրոյ առ 'ի բաւարարութիւն յարգութեանն ձերոյ , եւ կարց պատասխանի զայն՝ զորոյ օրինակն 'ի սմա ծրարեմ :

Մնամ միշտ յարգութեան ձերում
Ս. Ղազարար ծառայ ,
(Զեռ .) Տէր Գալուստն Երախտագիտական ,
Ի կալիւթա վիճակաւոր առաջ քահանայ
6 Փետրվար 1865 : Կալ . Ե . Ս . Ե . Զ .

(Մնացորդն յաջորդ քռով :) :

Բազմաթիւ ընկերութիւնք՝ որուն նպատակը Հայ ազգային հիւանդները խնամել է, իւր խոհմէն եւ դործունեայ ընթացքովը կարողեղաւ բարեկաշտ հասարակութեան համակրութիւնը ձեռք բերելու տարակոյս չունինք թէ օրըստօրէ ևս առաւել պիտի զարգանայ ի միութեամբ իւր հիւանդաց և ի պատիւ հիմնադրաց յիշեալ ընկերութեանը :

Խրեմեան Սկրտիշ վարդապետին իզմիր գտնուած ժամանակը սուրբ Մեսրոպեան և սրբոց Հովսէփիմեանց կրկին վարժարանաց այցելութեան երթալը լրացողոյ նախընթաց թուովը ծանուցինք : Այժմ կըլսեմք թէ յիշեալ սուրբ Հօր խնդրանքը՝ Մեսրոպեան վարժարանին առաջին դասուն աշակերտները սրբոց Վարդանանց նահատակութեան ներկայացումը տուեր են բազում յաջողութեամբ : Այս ներկայացման սկիզբը և վերջը, առաջին դասուն աշակերտներէն ոմանք պարագայիս յարմար զանազան արձակ ու ոտանաւոր զրուածներ կարդացեր են . որոց ամենուն վերայ գերապատիւ Սկրտիշ վարդապետը մեծապէս դժ ըլլալով՝ ազգու և սրբապատու հատենախօսութեամբ մի իւր անկեղծ շնորհակալութիւնը և իւր սրտին ուրախութիւնը յայտնելու հարցաւորութեանը և աշակերտաց յառաջադիմութեանը համար :

Երեսնայ վիճակին Առաջնորդ գերապատիւ տէր Ստեփան ծայրագոյն վարդապետը . որ իւր հոգեւոր հօտին օգտիցը վերաբերեալ հարկաւոր դործով մը Ս. Պօլիո գացած էր, այնտեղ նոյն գործը յաջողութեամբ ընդնշնելով, նմանապէս Մէճիտիէ կարգին երրորդ աստիճանի շքանշանաւ յարգուելով, անցեալ շաբթու հասաւ Իզմիր և այսօր մեկնեցաւ ասկէց Երեսնայ վերադառնալու :

Յիշեալ հայր սուրբը, որուն ուսումնասիրական և ազգասիրական բարենախանձ ջանքը գովութեան արժանի կըհամարուի, իւր մեկնելէ յառաջամտոյ 23ին կիրակի օրը հանդիսաւոր պատարագ մատոյց սուրբ Ստեփանոս եկեղեցին և պատուական քարոզով մի հոգեւորապէս միութեանց բոլոր ժողովուրդը :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 26 ՄԱՅԻՍ

Վայսերական հրովարտակաւ, (Թափառեալի միջին վսեմափայլ Հալիլ փաշան՝ մեծ ծովապետ անուանեցաւ փոխանակ վսեմափայլ Վէսիլփաշային, առաջին պաշտօնն ալ վրան մնալով :

Փարիզի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղարի պաշտօնը մեծարդոյ Տ. Արիսթաքի էֆէնտիին յանձնուեցաւ :

Մեծաշուք Քոնստանտին էֆէնտին . որ օսմանեան գործակալատար (շարժէ տաֆէր) կարգեցաւ ի Բէդէրզոյուրկ, երկրորդ կարգի պաշտօնատարութիւնը աստիճանը ընկալաւ :

«տեն թէ մայրաքաղաքիս (Զուռնայ) սըրբաբերը իւր կողմանէ յատկապէս եպիսկոպոսներէն ի Պոլսէն, ծանուցանելու համար Պանոբեան միացեալ իշխանութեանց կառավարութեանը թէ քաղաքական ամուսնութեան հաստատութիւնը, եկեղեցական անշարժ ստացուածները ազգային զանձուն յատկացնելու և իրաւունքն անկախ եկեղեցի մը կազմելը՝ օրթոթոքս հաւատոյ վարդապետութեանը հակառակ են . և այս բաները ընդհանրէր բանագրանաց պատիժը իրենց վերայ կը հրաւիրեն : Ի պատասխանի այս ազգաբարոյթեան, բարձրապատիւ Վալիա իշխանին կառավարութիւնը փութացաւ Պանոբեան իշխանութեանց երկրէն դուրս հանել տալու գլխեալ եպիսկոպոսը :

Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովը ամսոյս 21ին գումարուելով, ամեն բանէ առաջ մեծադոյն մաս կազմելու դժուարութիւնը վերցնելու հոգ տարաւ : Ուստի տեսաւ որ Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ 71 երեսփոխան մեկ տեղ բերելու շատ դժուար կըլլայ չքսեմք անհնար, անոր համար որոշեց որպէսզի մինչև դաւառական երեսփոխանաց ընտրութիւնը՝ 51 երեսփոխանաց ներկայութիւնը մեծադոյն մաս համարուի : Վասն որոյ յետ այսօրիկ երեսփոխանական ժողովը կարող պիտի ըլլայ 51 անդամով օրինաւոր նիստ ընել և ազգային գործքերը կարգադրել :

Վանեայի նախորդ զայմապամ Նազիֆ-Պէյըն՝ Այսթընի զայմապամ եղաւ : Եւ շէթ-Պէյին տեղը :

Օգոստոսի առաջին շաբթուան Մէճիտիէ կարգին առաջին աստիճանը շնորհելու Հալիլային ընդհանուր կառավարիչ վսեմ. Սիւրէյա փաշային . նմանապէս նոյն կարգին երկրորդ աստիճանի շքանշանը շնորհեց Երեսնայ վարդապետի կառավարիչ վսեմափայլ Իզմիթ փաշային :

Մեքսիքայի կայսեր արտաքին կարգի գեսպանը օգոստոսի առաջին ներկայանալով : յիշեալ տէրութեան Արժուոյ կարգին աստիճանի շքանշանը Վորին Վեհափառութեանը մատոյց ի կողմանէ Մաքսիմիլիանոս կայսեր :

ՔԱՆԱԶԱՆ ԵՄԻՐԱՅԻ

Զմիռնիւ, 29 Մայիս :

Վսեմափայլ Ռաշիտ փաշան տեղեկելով որ հոռոտու կաց գործքերը ուշադրութեամբ և փութով չեն նայուիր երբոր կուսակալին առժամանակեայ բացակայութեան կամ տկարութեանը պատճառաւ նոյն գործոց վարչութիւնը ուրիշին յանձնել չարկ կըլլայ, արժան համարեցաւ խնդրել Բարձրագոյն Պաշին, որ օգնական պաշտօնատար մի (մուավին) օսմանուր Իզմիրի կառավարութեանը համար : Ուստի կայսերական բարձր հրամանաւ, մեծաշուք Նէճիլ էֆէնտին որ խոհմէն Բանդուրան մեծ մըն է, մեր ըզհանուր կառավարչին մուավին կարգեցաւ 3000 զուրուշ ամսականով :

Քաղաքիս մարտաւանդ տեսուչ փոխաշուք Շէվքէթ-Պէյըն, որ Ս. Պօլիո գացած էր իւր պաշտօնին վերաբերեալ քանի մը հարկաւոր գործոց համար, գաւորնք յաջողութեամբ ընդնշնելով, անցեալ շաբթու վերադարձաւ ի քաղաքս : Այս առթիւ արժան կըհամարուի գովութեամբ յիշել Վորին Վսեմութեան մեծ ուշադրութիւնը և բարենախանձ ջանքը դուրս ի գործ կըլլեն միշտ մարտաւանդ բարեկարգ ընթացքին ու աւոր եկամտից վարդապետը համար, առանց վնաս պատճառելու վստահականաց օգտիցը :

Յուրաքանչեւ սրտի կիմանքով թէ Պաշինի մէջ ազգային երկրպագութիւնը մեծապէս ծանրացեր է . այսու ամենայնիւ վստահութիւնս մեծ է յիշեալ մոլորաբաղարին առաջնորդական փոխանորդ գերաւ Սկրտիշ սրբազան արքեպիսկոպոսին խոհմութեանը վերայ թէ պիտի յաջողի բարեկարգութիւնը վերահաստատելու :

Մայիսի 20ին, Նազիլիի մօտէն անցած գետը սաստիկ անձրեւէ մի ետեւ յորդելով՝ ջուրը յիշեալ գետը քողարկը տարածուեցաւ սոսկալի հեղեղով մի և բազմաթիւ տուններ, կենդանիներ, աղաւթներ և այլն քեչց տարաւ : Երանք վնասը շատ մեծ է և կըսեն թէ երկու միլիոն զուրուշի կըհասնի :

Քանի մը շաբաթէ ի վեր Իզմիրի (Թաղական մեծարդոյ խորհուրդը իւր հրամարականը տուած ըլլալով, ազգային գործքերը բոլորովին երեսի վերայ մնացած են, անոր համար ստիպողական հարկ կը տեսնուի որ երեսփոխանական ժողովը փութայ իւր զիւանը կազմելու : Եւ թէպէտ այս բանը ընելու համար՝ կըհարկաւոր սպասել որ վիճակներէն երկու երեսփոխան ևս ընտրուին, այսու ամենայնիւ երկու հոգեւոր պալատութեանը համար ազգային գործքերը երեսի վերայ թող տալը խոհմութիւն չէ : Վասնորոյ ազգին զիւանորներէն շատերը միաբանութեամբ (Թաղական խորհուրդը անդամաց երէկ աղերսագիր մի մատուցին քաղաքիս առաջնորդական փոխանորդ Հայր սուրբին, ազգեւել զնա, որ բարեհաճի ի ժողով հրաւիրել արդէն ընտրուած 37 երեսփոխանները՝ որպէսզի իրենց զիւանին կազմելով, ազգային գործքերը զոնէ առժամանակեայ կերպիւ խնամուին :

Հուսմաք թէ յիշեալ յարգելեաց և մեծարդոյ (Թաղական խորհուրդը) անդամաց այս ազգասիրական խնդիրը շուտով ի գործ կըդրուի . մանաւանդ որ Ս. Պօլսոյ կեդրոնական ընդհանուր ժողովը՝ գաւառական երեսփոխաններէն և ոչ մէկ հոգի ընտրուած ըլլալով՝ իւր զիւանը կազմած է ու ազգային գործքերը կըկարգադրէ : Բայց Իզմիրի վիճակներէն ընտրուելու 12 երեսփոխաններէն արդէն 7 հոգին

ընտրուած է և միայն երկու երեսփոխանաց ընտրութիւնը կըպակսի, որ երեսփոխանական ժողովը կառու ըլլայ իւր զիւանը կազմելու ըստ հրահանգին : Բայց կըլինենք, թէ երկու հոգեւոր պալատութեանը համար արժան չէ անխնամ թողուլ ազգային գործքերը . ուսկից մեծ միասնեք կընան ծագիլ :

ԵՌԵՒՏՐԵԱՆ

Անդրեայէն հասած յաջող լրոյց պատճառաւ բաւական կուզուի և զինքը զգալի կերպիւ բարձրացան : Այս շաբթու 900 հակի չափ զանազան տեսակ բամպակ ծախուեցաւ . Քաղաքաճը 450-էն մինչև 535 զուրուշի կենդանարը . Վաստպան 500-530 և Սոսուճան 520-էն մինչև 630 : Ընդամենա քաղաքիս միայն 3000 հակ պատրաստ բամպակ կըզանուի :

Իզմիրի մէջ գտնուած բոլոր աֆիւնը, որ 41 կուզովի կըհասնէր, Հոլանտիոյ ընկերութեանէն ծախու առնուեցաւ 110-112 զուրուշի չէքին : Վարձեալ նոր հունձի աֆիւնէն 2200 չէքին չափ վաճառեցաւ 99-100 զուրուշի չէքին մինչև 121 օր յանձնելու պայմանաւ, և հարուրին 80 զուրուշ խանիկի վճարելով : 8000 կենդանարի չափ փաշա մուս վաճառեցաւ 9-էն 100 զուրուշի կենդանարը :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կազմով լուսաւորուած Իզմիրի թաղերուն բնակչացը իմաց կըտրուի, թէ կազմով լուսաւորութեան հարկը հետեւեալ կերպիւ որոշուեցաւ .

Տասներկու կազ կամ աւելի երես ունեցող տուները (որոնք առաջին կարգի կըհամարուին) պիտի վճարեն 15 զուրուշ ամիսը :

Ութնէ մինչև 12 կազ երես ունեցող տուները (որոնք երկրորդ կարգի կըհամարուին) ամիսը տասը զուրուշ պիտի վճարեն :

Ութ կազէն նուազ երես ունեցող տուները (որոնք երրորդ կարգի կըհամարուին) 6 զուրուշ պիտի վճարեն ամիսը :

Առաջին կարգի խանութները և շտեմարանոցները (մաղաղա) ամիսը 8 զուրուշ պիտի հատուցանեն : Այս կարգին մէջ պիտի դասուին ամեն սրճանոցները, զինեմունները, պանդոկները, խոհարարի խանութները, բաշինքները, և ուրիշ տեղուանքը ուր ընկելը կըվաճառեն :

Երկրորդ կարգի խանութները և շտեմարանոցները՝ ամիսը 4 զուրուշ պիտի վճարեն :

Յիշեալ հարկերը պիտի վճարուին սկսեալ այն ժամանակէն յորմէ հետեւ կազով լուսաւորութիւնը հաստատուեցաւ թաղին մէջ մինչև ի 1 Յուլիսի 1865 ըստ նոր առմարի, և յետ այնորիկ 3 ամիսէ 3 ամիս կանխիկ պիտի հատուցուի :

Կազով լուսաւորուած անշարժ ստացուածոց տէրերը պարտաւորեալ են այս հարկերը վճարելու . և յետոյ թէ կուզեն, կրնան վարձու բռնողներէն պահանջել իրենց վճարած հարկին փոխարէնը :

ՀՐԱՄԱՆՈՒ

Իզմիրի նահանգին ընդհանուր կառավարութիւն :

Իմաց կըտրուի հասարակութեան քե հաստատեալ կանոնադրութեանց համեմատ՝ անշարժ ստացուածոց սր եւ վարձուք պէտք է ըլլայ տեղական կառավարութեան առջեւ, վաւերական պայմանագրութեամբ :

Անոց որ օրինագանց կըգտնուին այս կանոնադրութեան, պիտի պարտաւորուին նորեւ օրինաւոր կերպիւ պայմանագրութիւն ընել . եւ կրկնապատիկ տուրք վճարելու պիտի դատաւարտուին : Մասնաւոր կերպիւ եղած սր եւ վարձման վերաբերեալ դատերը ամենեւին գործարկն պիտի չունենան դատաստանարանաց առջեւ . որ բոլորովին անվաւեր եւ չեղած պիտի համարի գանոց :

Ներկայ ազգաբարոյթեան ամսաբուռն սկսեալ 21 օր պայմանաւոր տրուած է հասարակութեան, որպէսզի ի գործ դնեն գլխեալ կանոնադրութիւնը :

Իզմիր, 4 Մայիս 1865 :

Խմբագրութեան լրագրոյս,

Գ. Կ. Պ. Պաշին :